# ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբան Հայրեր՝ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը և Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը, վերջերս Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Հոգևոր ակադեմիայի կողմից ստացան աստվածաբանական գիտությունների թեկնածուի կոչում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հոգեշնորհ Հայրերն աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու նպատակով երկու տարի է, ինչ ուսանում էին Մոսկվայի Հոգևոր ակադեմիայում: Ավարտելով ուսումը, Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը հաջողությամբ պաշտպանել է գիտական թեզ՝ «Ս. Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքները» թեմայով: Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանի գիտական ուսումնասիրության թեման է՝ «Հայ Եկեղեցու ծեսի զարգացման պատմությունը 5-15-րդ դդ. և նրա յուրահատկությունները Ուղղափառ ավանդության հետ զուգահեռում»:

Հայր Մուշեղն ու Հայր Հովակիմը, վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կշարունակեն իրենց հոգևոր ծառայությունը Մայր Աթոռի կառույցներում:

# ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՏԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հունիսի 1-7-ը Էստոնիայի Հանրապետության մայրաքաղաք Տալլինում տեղի ունեցավ Բանտերի հոգևոր սպասավորների միջազգային ասոցիացիայի /IPCA/ համաեվրոպական հավաքը, որին արդեն երրորդ տարին իր մասնակցությունն է բերում Հայ Առաքելական Եկեղեցին: Ի թիվս 30 երկրների շուրջ 150 հոգևորականների, այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հավաքին մասնակցում էր հայաստանյան քրեակատարողական հիմնարկների հոգևոր պատասխանատու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես սարկավագ Ռուշանյանը:

Համաեվրոպական հերթական այս հավաքի նշանաբանն էր՝ «Ես բանտում էի, և դուք այցի եկաք», և նպատակ ուներ զեկուցումների և քննարկումների միջոցով նպաստել բանտային հոգևոր ծառայության մակարդակի բարձրացմանը: